

ՆՈՐ ԳՐՔՆՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«ՌԱԶՄԱՃԱԿԱՍԱՏՅՈՒՆ ՀՈՒՇՆՐ» — «Հայաստան» հրատարակչություն, տպաքանակը 10000,
£20 էջ:

Հայրենական պատերազմի մասին բազմաթիվ լեզուներով գրված գրականության մեջ իրենց առանձնահատուկ տեղն ու նշանակությունը ունեն հաղթանակատու մարտնչող սպաների, զորահրամանատարների ու քաղաշխատողների կենդանի հուշերը:

Ահա այսպիսի հուշերի ժողովածու է ներկա աշխատությունը, որ հրատարակել է ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալը: Ֆիլիալը իր առջև նպատակ է դրել հավաքել և հրատարակել Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայ, ինչպես նաև հանրապետությունում բնակվող այլ ազգի զինվորականների հաղթական հուշերը:

Այս առումով «Ռազմաճակատային հուշեր» ժողովածուն առաջինն է, որում տեղ են գտել Սովետական Միության հերոս գեներալ-լեյտենանտ Ս. Ս. Մարտիրոսյանի, Սովետական Միության հերոս գեներալ-մայոր Ա. Գ. Կարապետյանի, գեներալ-մայոր Հ. Հ. Մարտիրոսյանի, գեներալ-մայոր Ն. Գ. Սաֆարյանի, գեներալ-մայոր Խ. Ա. Գանիկի, գեղապետներ Ն. Պ. Բալոյանի, Ա. Հ. Հարությունյանի, Դ. Վ. Գյուլեցյանի հաղթանակատու հուշերը:

Նշված հեղինակներից յուրաքանչյուրը պատմում է իր զլխավորած զորամիավորումների ուղղակի գործողությունների որոշ գրվագներ, որտեղ երևան են եկել նրանց հաղթական արվեստն ու հմտությունը, ինչպես նաև՝ սովետական զինվորների ու սպաների ջերմ հայրենասիրությունն ու քաջագործությունը:

Ժողովածուն կազմել և խմբագրել է Վ. Վ. Ղազանյանը:

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԻ ԽՐՍՔ ԽԻԿԱՐԱՅ ԽՄԱՍՏՆՈՅ», գիրք Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն,
տպաքանակը 1000, 362 էջ:

Հայկազան ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի «Մատենադարանի» գիտական խորհրդի որոշմամբ վերջերս լույս է տեսել «Պատմություն եւ խրատը Խիկարայ իմաստնոյ» գրական հուշարձանը, որ տպագրության է պատրաստել Ս. Ա. Մարտիրոսյանը:

Խիկարի զրույցը արևելքի այն հնագույն երկերից է, որ անցնելով գրեթե երկուհարյուր հազարամյա ուղի ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների և մեղ է հասել մի շարք լեզուներով՝ արամեերեն, ասորերեն, հունարեն, հայերեն, էթովպերեն, արաբերեն, սլավոներեն, ռումիներեն, ղփչաղերեն և այլն:

Սա մի պատմություն է ապիրախտ քննորդու մասին, ընդմիջված խրատներով, առակներով և հանելուկներով:

Զրույցի արժեքը նրանում է, որ այն արևելյան բնորոշ և հազվագյուտ երկ է և ունի հետաքրքիր թեմա: Զրույցը մերվել է ազգային շատ գրականությունների, որոնց թվում նաև մեր գրականության հետ: Այն բազմաթիվ անգամ հրատարակվել է հայերեն և ամեն անգամ կրել որոշ փոփոխություններ՝ բանահյուսության համար առաջադրված մեծ դժվարություններ, հատկապես աղբյուրներից օգտվելու հարցում:

Գրքում հրատարակված են Խիկարի զրույցի հայկական վեց տարբերակների բնական բնագրերը, որոնցից հնագույնները պատկանում են XIV դարին: Սրանք երկու դարով ավելի հին են, քան մինչև այժմ գիտությանը հայտնի բոլոր խմբագրությունները: Վեց տարբերակից շորսը ցայսօր անհայտ էին գիտությանը, և հեղինակի պրպտումների արդյունքն են: Դրանց օգնությամբ կարելի է ճշտել Խիկարի զրույցի նախնական բնագրերին վերաբերող շատ հարցեր:

Գիրքը վերջանում է «Աղյուսակներ և աղբյուրներ» բաժնով: Աղյուսակներում տրվում է խրատների համակարգն ու ձեռագրական ազգակցականությունը: Աղյուսակները միևնույն ժամանակ օգնում են բնագրի մեջ գտնելու ցանկացած խրատը: Աղբյուրներում հեղինակը հանգամանորեն լրվում է բոլոր այն ձեռագիր և տպագիր աղբյուրները, որոնցից օգտվել է ինքը:

Խիկարի դրույցի հայկական խմբագրության բնագրերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում միջնադարյան բանասիրությունը ուսումնասիրողների համար:

Ա. Կ. ՍՇԱՆՅԱՆ — «Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունը», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, տպաքանակը 2000, 164 էջ:

Մենագրությունը նվիրված է Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնասիրությանը և առաջին ծավալուն աշխատությունն է նրա գեղարվեստական ու քննադատական ժառանգության գնահատման ուղղությամբ: Պարբերական մամուլի և հարուստ արխիվային նյութերի հիման վրա հեղինակը վերլուծում և վերագնահատում է գրողի աշխարհայացքն ու նրա գեղարվեստական հավատամքը:

Չափազանց բեղմնավոր է եղել Լեոյի գրիչը: Մի քանի հազարի հասնող լրագրային հոդվածներ, 70-ից ավելի պատմվածքներ, վիպակներ, դրամաներ ու վեպեր, հայոց մշակույթի գրականության, հասարակական մտքի, ազատագրական շարժումների, հրապարակախոսության պատմություններ. աղագրական ուսումնասիրություններ, ուղեգրություններ, հուշեր, հիշատակարաններ, թարգմանություններ և, վերջապես, հայոց պատմության բաղժահատոր շարադրանքը, ահա նրա ժառանգության մոտավոր ցանկը: Ժամանակակիցները նրան անվանել են գրական հիմնարկություն: Բայց, որքան էլ տարակուսելի է, Լեոյի ղիտական-գեղարվեստական-հրապարակախոսական վաստակը մինչ այսօր բաղժակողմանի ուսումնասիրության առարկա չէր դարձել: Ա. Կ. Սահյանի ներկա աշխատությունը այդ բացը լրացնելու խրախուսելի մի փորձ է, որում բացահայտված է Լեոյի գեղագիտական հայացքների սիստեմը, աշխարհայացքը և նրա տեղն ու նշանակությունը հայ գրականության մեջ:

Գիրքը բաղկացած է երեք բաժնից: Առաջինը, որ կրում է «Կյանքի ուրվագիծը» վերնագիրը, նվիրված է Բարախանյանների ընտանեկան նկարագրին և Լեոյի մանկության, ուսումնառության ու աշխատանքային գործունեության բացահայտմանը:

Հաջորդ՝ «Մարտնչող գրականության տեսաբանը» բաժնում հեղինակը հանդամանորեն խոսում է Լեոյի ապրած ժամանակաշրջանի, նրա «Խուսահայոց գրականության...» մեջ թույլ տված վրիպումների և գեղարվեստական հայացքների մասին:

«Գեղարվեստական ստեղծագործությունը», այսպես է կոչվում մենագրության վերջին՝ երրորդ բաժինը: Այստեղ գրքի հեղինակը նշում է, որ Լեոն գեղարվեստական ստեղծագործությամբ սկսել է զբաղվել կյանքի վաղ տարիներից: Նրա առաջին ստեղծագործությունների թեման դյուղաշարժի կյանքն է ու գավառադաքի առօրյան: Առաջին տպագիր գործը, որ կրում է «Մնապաշտության քուրմ» վերնագիրը, նվիրված է հայ գյուղաշխարհի դարավոր խավարի պատկերմանը: Ապա վերլուծված են Լեոյի այլ թեմաներով գրած գործերը, իսկ վերջում նրա ուղեգրական գրականությանը նվիրված աշխատությունները: